

երբ լրանում է թիֆլիսի ուսուցիչների մէջի զոյուլթիան մի այնպիսի պատկանելի տարեշրջան, ինչպէս է «НАВКАЗ» լրագրի յիսնամեակը, մենք մեր պարտքն ենք համարում յիշեցնել այդ զգալի պակասը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՂԲԱՏ ԳՐԱԳՐԱՆԵՐԸ

Մարդու մի առանձին ուրախութիւն է պատճառով, երբ տեսնում է, թէ ինչպէս մեր գիւղական համարեա թուր զարգացման անտարբեր եռանդով աշխատում են կազմել իրանց համար փոքրիկ գրադարաններ, որոնք լինեն մի քանի լրագրիներ, մի քանի տասնեակ գրքեր՝ թէ զարդացում ծառայողների և թէ գրադար գիւղացիների ընթերցանութեան համար:

Գիւղական զարգացումը, ահա այդ ցանկութիւնից դրդված, անգուշար յայտարարութիւններ են տպում արտաշուկ հայոց լրագրիների խմբագրութեան, հեղինակների, խմբագրմանիւնների՝ նուիրել մի լրագրի, մի քանի գրքերու՝ Նորերս, երբ «Մշակ» մէջ տպագրվեց յայտարարութիւն, թէ երիտասարդ Տէր-Խաչատրեանի մասնակցից յետոյ մնացած մի քանի հարիւր գրքերը պէտք է բաժանվեն գիւղական զարգացումը, մեր խմբագրութեան մէջ տպագրվեց մօտ 100 նամակ, որոնցով խնդրում են այդ գրքերից բաժին հանել իրանց զարգացումը, իրանց գիւղի աղքատ գրադարանին:

Մի ուրիշ փաստ է՝ հայ որ տարվայ վերջը մտնում է, ահա ամեն կողմից բազմաթիւ զարգացում անվերջ նամակներ են ուղարկում խմբագրութեան, խնդրելով ձրի «Մշակ» ուղարկել զարգացում, կամ գրադարանին, պատճառաբանելով որ միջոց չը կայ բաժանորդագրինը վճարելու: Եւ այդ տեսակ նամակների թիւը հասնում է 200-ի: Տարբարաբար, խմբագրութիւնը անխորոշ է լրագրին տալ այդ համակրելի խնդրերին, և սակայն է, որ մասնաւոր մարդիկ նուէրներ ուղարկեն, որպէս զի այդ նուէրներով «Մշակ» ուղարկվի այս կամ այն զարգացում:

Այդ տեսակ փաստերը ցոյց են տալիս, որ մեր զարգացումը, զարգացման փոքրիկ գրադարանները բոլորովին միջոցներ չունեն նոյն իսկ մի լրագրի և մի քանի գրքեր ձեռք բերելու համար, և այդ աղքատութիւնը, ի հարկէ, շատ

մեծ արգելքներ է դնում ընթերցանութեան տարածման առաջ:

Ինչ ասենք այդ փաստի դէմ.—էլի հրաւեր կարգանք մասնաւոր բարեգործութեան: Բայց չէ որ այդ մասնաւոր բարեգործութիւնն էլ հայերի մէջ ցոյցան չունի է, որ իսկապէս նա զարգացում չէ անում, այլ շատ անգամ մուրացկանութեան է վարժեցնում:

ՀԱՅ ՖԻՆԱՆՍԻՍՏՆԵՐԸ

«Մշակի» այսօրվայ համարում տպված լուրը թիֆլիսի առևտրական բանկի մի անհամակրելի ըստի մասին, արժանի է «փոքրիկ» ուշադրութեան:

Հայ ֆինանսիստները, զոնէ թիֆլիսի հայ ֆինանսիստները մի անգամ են ապացուցին, թէ նրանք, բացի ժամանայից և իրանց գրգռանքից՝ ուրիշ Աստուծու չեն ծառայում:

Ռուսաստանում, նոյն իսկ Կովկասում նոյնպէս կան բազմաթիւ բանկային և մասնաւոր ֆինանսական հաստատութիւններ, որոնք միլիոնաւոր գործողութիւններ են կատարում, ամեն կերպ աշխատում են մեծ դիվիդենդներ տալ իրանց ակցիոններներին և հիմնադրներին, բայց այդ շահաւորական հոգսերի մէջ նրանք չեն մտնում և բարեգործական ու փարոսայիտական հոգսերը ու նպատակները վեր առնելը, որինսկի համար, խորհովի վաճառականական բանկը, թիֆլիսի և ֆոթիպիսի կայունական բանկերը, խորհովի վաճառականական բանկը իր գոյութեան 29 տարվայ ընթացքում ստացել է 5,238,571 ռուբլի զուտ շահ և այդ զուտարկից յատկացրել է զանազան բարեգործական նպատակներ, ինչպէս զարգացում, հիւանդանոցներ, աղքատանոցներ, պաշտարաններ և սովակներին համար 1,905,845 ռուբլի, այսինքն շահի մօտ 37%օը:

Թիֆլիսի և ֆոթիպիսի վրաց կայունական բանկերը նոյնպէս նշանաւոր գումարներ են յատկացնում ամեն տարի զարգացման պահպանութեան և այլ բարեգործական նպատակներին համար:

Իսկ ինչ են անում մեր երկրի այն բանկային հաստատութիւնները, որոնց ղեկավարները, հայ խոշոր գումարատէրներ, ֆինանսիստներ և հայ վաճառականներ են, ինչպէս թիֆլիսի, Բագուի և Բաթումի առևտրական բանկերը, թիֆլիսի և

ուրիշ ազգերը Մակայն, բոլորովին ուրիշ կերպ են նայում չեղքեղը աշխատանքի վրա: Նրանք սիրում են ապրել ուրիշի հաշուով, թաւանել, սպանել, կողոպտել, առանց աշխատելու անվերջ քէֆեր անել, և ահա այդ է պատճառը, որ անգուշար զարգացում են, անվերջ զարգացում են թիֆլիսի:

Չեղքեղների զարգացումը վրա մեծ աղքատութիւն ունեն տեղական հայիները: Դրանք մեծ մասամբ հասակաւոր մարդիկ են, որոնք արժանացած են ս. տեղերին երկրաշարժից: Դրանք իսկ ուրպէս զի Մեկկա և Մեղեհա հասնեն, նրանք անցնում են Կ. Պոլսով կամ ընդհանրապէս թիֆլիսի, և ահա վերադառնալիս արդէն պատրաստված են զարկ, որպէս զի արդէն չեղքեղներին զարգացում Հայիներին զի մասորներ համար յաճախ մի քանի առկներ պատգամաւորներ են ուղարկում, որոնք թիւը երբեմն 200-ից անցնում է:

Պէտք է տեսնել, թէ որպիսի երկրաշարժից են հանդիպում հայիներին. իւրաքանչիւրը իր պարտքն է համարում մօտենալ և աշխատելով հարցնել սրբապետների և խաղիֆի ու նրա երկրի ղրութեան մասին, որին պատասխան է լինում զոհութիւն Ամենաբարձրին: Եւ ահա սկսվում են ի պատիւ վերադարձողների տօնախմբութիւններ, ձիարշաւներ, որոնք շատ անգամ մի չաթով են տեսնում:

Առիթ ունենալով մի այդպիսի տօնին ներկայ լինելու, հարկաւոր ենք համարում հաղորդել մի քանի մանրամասնութիւններ: Ամբողջ օրը հիւրանկար (кунацкая сакия) լցված է չեղքեղներով, մեծ և փոքր ակնայի են դնում թէ ինչ է ասում հային, և ի հարկէ, հային վրա գոյնբերով նկարագրում է երկրի ղրութիւնը, և երբ իր խօսքը վերջացնում է, աչքերը երկինք բարձրացնում, բացականչում է՝ Միայն մենք ենք պակաս, միայն մենք ենք, որ մնացել ենք հեռու մեր սրբապետներից, ոյժ սուր մեղ, որ մենք էլ գնանք

Բագուի փոխադարձ վարկի ընկերութիւնը, թիֆլիսի բարձրակայն կրէդիտական ընկերութիւնը Այդ բանկերը ևս միլիոնաւոր գործառնութիւններ են կատարում, խոշոր դիվիդենդներ են ըստանում, հոգս են տանում որքան կարելի է շատ շահ ոտանալ, բայց մի բուքի, մի կօտէկ չեն յատկացնում որ և է բարեգործական, ընդհանուր գործի:

Եւ երբ բարեգործական ընկերութիւնները յիշեցնում են նրանց այդ բարոյական պարտաւորութիւնը, արթնացնում են նրանց թմրած խղճմանը, քարացած մարդասիրական զգացումները, նրանք փոխանակ սթափվելու, զգալու, աւելի ամուր են փակում իրանց գրգռանքները և խեղդում խղի ձայնը աշխարհի անհեթեթ, անհիմն պատրուկներով, թէ չեթէ մէկին տաս, միւսն ևս կուղէ:

Ուրեմն, մեր երկրի հայ ֆինանսիստների լոգիկայով, եթէ մի քաղաքում սովից մեռնող հազար հոգի գտնվեն և բոլոր այդ հազար հոգու անկարելի լինի օգնել, պէտք է թողնել, որ սովամահ լինեն և նրանք, որոնց կարելի է օգնել, որովհետեւ չամենքն չէ կարելի օգնել: Խոստովանում ենք, միայն հայ վաճառականը, չբացի մասնաւորից ուրիշ ոչ մի Աստուծուն չեղքեղագող: Կապիտալիստը կարող է այդպիսի վայրենի, ծաղրելի մտքեր արտայայտել:

Թիֆլիսի առևտրական բանկը ստանում է տարեկան 15—16% զուտ շահ, աւելի քան 50,000 ռուբլի: Եթէ նա այդ խոշոր գումարից տարեկան մի հազար ռուբլի յատկացնի զանազան բարեգործական նպատակներին, նրա ակցիոններին կամեն մէկը հողել մի քանի կօտէկներ կը կորցնի, բայց այդ գումարով զուցէ հարկւրաւոր ցաւեր և տանջանքներ սփռվէին և ապաքինվէին: Եւ այդ հազար ռուբլին կարելի էր բաժանել զանազան բարեգործական հաստատութիւններին մէջ, որպէս զի հայ ֆինանսիստների զգալուն խեղճը զրաւում հանգստանար, եթէ միայն անկեղծ է նրանց առաջ բերած պատճառաբանութիւնը, թէ արեւելիս չէ մէկին օգնել, երկրորդին ոչ:

Մակայն ինչ ենք ասում.—Այդպէս է միշտ հայը. խոյս տալ միշտ բարեգործութիւնից, մարդասիրական զգացումներից, բայց իր այդ ուղիւ հակակրէլը քայլը աշխատել արդարացնել անմիտ դատողութիւններով և պատճառաբանութիւններով:

Հ.

ՖԻՆԱՆՍԻՍՏՆԵՐԻ ՄԻՆԻՍՏԵՐԻ ՈՒՂԱՐԿԱՄ ՀԵՌԱԳԻՐԸ

Առևտուրի և մանուֆակտուրայի թիֆլիսի կօմիտեալը ուղարկել է մեղ այն հեռագրի պատճէնը, որ նա ուղարկել է Պետերբուրգ, ֆինանսների մինիստրին:

Այդ հեռագրի մէջ ասված է, «Անդրկովկասեան երկաթուղու վրա երկհեկութիւնը դադարած լինելով և կարճ միջոցում ճանապարհի վերանորոգելը անկայտ լինելով, արդիւնաբերողները և առևտրականները անելանելի դրութեան մէջ են, չունենալով ապրանք ուղարկելու ճանապարհ: Այս ծովի նաւահանգիստներից: Օգտվել Վլադիկավկազի գծով, եթէ մինչև անգամ ուշադրութեան չառնվի թանգ ծախքը և ապրանքների ծանրութիւնը, ոչ մի նարաւորութիւն չը կայ, որովհետեւ ապրանքներ հաւաքվել են մեծ քանակութեամբ, ճանապարհը շատ շուտ փակվում է ձիւների պատճառով, բացակայում են փոխադրութեան միջոցները, օր օրի վրա բարձրանում է փոխադրութեան վարձը: Առևտրի կոմիտեալը, նկատի ունենալով որ բոլորովին անհնարին է փոխադրել ապրանքները նախկինից չորս անգամ աւել գնելով, պատիւ ունի յարգանքով խնդրել ձեր բարձր գերազանցութիւնից, ժամանակաւորապէս ուղիղ հաղորդակցութիւն հաստատել Անդրկովկասեան երկաթուղու կայարաններից: Բագուի և Պետրովկի վրայով մինչև Սև ծովի նաւահանգիստները, տալով ապրանք ուղարկողներին կարելի եղածին չափ արտօնութիւններ և զեղջկելով փոխադրութեան վարձը Բագուից մինչև Սև ծովի նաւահանգիստները: Անդրկովկասեան երկաթուղու գում հասնելի բաժնի հաշին, այն չափով որ տանմանով է ուղիղ հաղորդակցութեան ճանապարհով ուղարկվող ապրանքների համար, համաձայն տարիքների ժողովածուի 687 յօդ. »

Հաւանորէն ֆինանսիստի մինիստրից դեռ ոչ մի պատասխան չէ ստացվել, ապա թէ ոչ կօմիտեալը այդ պատասխանը նոյնպէս հրատարակութեան կը տար:

ՄԱՍՆԱՐԿԱՐԹԻՒՆ

Մի բացատրութիւն

«Մշակի» անցեալ համարում, Արուստայի արաբաղի հայ պատմադրի աշխատութեան մասին մեր յօդուածը գրեթե ցետոյ, մենք տեղեկացանք, որ Վէնեցիայի Միսիթարեան տպարանից այս օրերս, հ. Ղևոնդ Ալիանի խմբագրութեամբ,

Չեղքեղները, այլ լեռնականների նման, չափազանց հիւրասէր են և հիւրի համար պատրաստ են նոյն իսկ մեռնել, սակայն ճանապարհ դնելուց յետոյ, նրանք իրանց բոլորովին ազատ են զգում նրա վերաբերմանը, նոյն իսկ յաճախ սպասում են անձնական հաշիւների պատճառով կամ կողոպտելու նպատակով:

Չեղքեղ կինը նոր է դուրս գալիս հարեմական գրութիւնից, այժմ արդէն չեղքեղներին երեսը բաց աշխատում է դաշտում, նոյն իսկ ցորեն ծեծելու մեքենայի վրա կանգնած, ուսուցիչ հաւատարմ Բայց 3—4 տարի առաջ այդ տեսակ բան չէր կարելի տեսնել. և սեպտեմբր չեղքեղներին փակված էր տանը, մասնաւոր հատկապէս առած օրերով, որը օրից օր սպասում էր փախցնող կտրճի:

Վերջին ժամանակներս նրանց մէջ սկսվեց նրկատել սէր դէպի ուսումը և բուսաբանութիւնը, սակայն միւս կողմից էլ մեղ յայտնի են դրան հակառակ դէպքեր, երբ նոյն իսկ մի քանի տարի պետական զարգացում կրթված տղաներ, ծնողների կարգադրութեամբ, համվել են զարգացիւ և յանձնվել մասնաւորական մօլլային, որ նրանց կրթիւ և դատարարակց զուգանի ողու և պահանջների համեմատ:

Չեղքեղների թիւը 1891 թիւի պաշտօնական համարագրութեամբ, այժմ թէ կուբանի շրջանում և թէ Թեքէրի շրջանում միասին հասնում է 161,9600-ի, որից 105 հազար կուբանի շրջանում են:

Չեղքեղների լեզուն տարբեր է այլ լեռնականների լեզուներից, մեծ մասամբ գործ են ածվում՝ չղղական, կովորդային և բլբային ձայներ: Սրանց լեզուն է տիրապետում արաբիցի հայերի մէջ, որոնք միայն վերջերս սկսել են խօսել ռուսերէն, իսկ հայերէն համարեա չը գիտեն:

Նիկ. Սաթ.

*) Лермонтовъ—Измаиль-Бей.

դուրս է եկել այդ աշխատութեան մի մասի հայերէն թարգմանութիւնը—«Արու-Սահ» հայ պատմութիւն եկեղեցեաց և վանքերից խորհրդա-սիւն վերնադրով:

Ահա ինչ ենք կարդում այդ հրատարակութեան մասին «Բաղմալեպ» հանդէսի մէջ:

«Մայն հատորս, որ կը բաղկանայ 5 թերթերէ, կը պարունակէ: Արու-Սահ հայ արաբագիր պատմիչի միտքն այն կտորներն, որ հայոց կը վերաբերին, որոց վրա աւելցուած է կամ լաւագոյն ևս ըսելով՝ ճշմարտացած է կարեւոր և հետաքննական ծանօթութեամբ հ. Ղևնդ Ալի-շան, որ գրեթէ զբոսն մեծ մաս մի կը գրանշէ: Գիրքը, ինչպէս յայտնի է խորագրէն՝ կը խօսի եղիպտոսի մէջ հայոց ունեցած վանքերուն, կալուածոց, նոյնպէս նաև երևելի և իշխանաւոր անձանց վրա: Բանասիրաց համար խիստ հետաքրքրական և ընտիր հատորիկ մը է»:

Հ. Ա.

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐՈՒԹԻՒՆ

Գեղեցեմբերի 13-ին

Գեղեցեմբերի 10-ին տեղի ունեցաւ սովորական «հայկական երեկոյթը», որ հայ ուսանողները իւրաքանչիւր տարի ապրիլ եւն յօգուտ իրանց չքաւոր ընկերներէ: Պէտք է նկատել, որ վերջին տարիներս մեծ քանակ է գործ դրուում, որքան կարելի է երեկոյթը չեղծ և մեծ դարձնելու: Այդ բանը աջողութեամբ է հայ ուսանողներին, բայց միշտ ի վնաս նիւթակաշիւն:—Ժամերը լինում են անաղին, իսկ արդիւնքը համեմատաբար շատ քիչ: Դեռ անցեալ տարի հայոց երեկոյթի դասընկերները լցված էին մի այնպիսի բազմութեամբ, որ, ինչպէս ասում են, «ասեղ գցելու տեղ չը կար»: Ուստի և այս տարի հիմնովնով մասամբ անցեալ տարվայ փոքրի, մասամբ էլ նկատվող հետաքրքրութեան վրա, ուսանողութիւնը վատաճացաւ երեկոյթը տալ «աղետական» ժողովարարանում, որը անհամեմատ մեծ է այն բոլոր դասընկերներից, ուր մինչև այժմ արվել են հայոց երեկոյթները: Վստահութիւնը մեծ էր և մինչև իսկ վտանգաւոր նիւթակաշի տեսակէտից, բայց, բարեբաղդաբար, սպասածի հակառակ այդ վստահութիւնը աջողութեամբ պատկանց:

Երեկոյթին ներկայ էր մեծ բազմութիւն—այդտեղ էր համարեա ամբողջապէս Պետերբուրգի հայոց կօյնիւն, բայց համեմատաբար փոքր մասն էր կազմում այն անաղին հասարակութեան, որ կազմված էր ուսանողներից և օտարազգիներից: Օթեմիւններից մի երկուսը զարդարված էին զանազան գորգերով և արեւելեան ճաշակով կազմված կիօսկներով, ուր հայ հասարակութեան ներկայացուցչուհիները ծախում էին գեղեցիկ ափսիներ, փետուրներ ու զանազան խմիչքներ:

Կոնցերտային բաժինը, որ կազմված էր հետաքրքիր և բազմակողմանի, բազմակողմանի պատճառեց հանդիսականներին: Երգչուհիներից մասնակցում էին Շահլամեան, Տարապետ, Տամանյան, Դոնիկով և այլն, որոնք համարեա բոլորն էլ մեծ ոգևորութեամբ և երկարատե ծափահարութիւններով ընդունեցին:

Կայսերական օպեր. թատրոնի նուագախումբը մեծ աջողութեամբ նուագեց՝ կազաչենկօի դեկլամարութեամբ, մի քանի արեւելեան և հայկական եղանակներ: Երգչուհի Շահլամեան, տ. Տամանյանի հետ երգեց, «Որ մահկանացուն» և «Արաքսի արցունքը»: Այդ երկուսն էլ կազաչենկօի մշակած դուետներն են, որոնց արաբիաները ստիպված էին կրկնել, զիջանելով հասարակութեան երկարատե ծափահարութիւններին և bis-երին:

Ուսանողներից և երգչուհիներից կազմված երգչուհի խումբը երգեց «Էր հեռանաս», «Զարթիւր սիրտ իմ», «Զիւմ վրին» և զէյթունցիների մարջը: Վերջինը երգվեց օրկեստրի հետ միասին և մեծ ոգևորութեամբ ու bis-երով ընդունվեց:

Անտրակտների ժամանակ արեւելեան ճաշակով զարդարված օթեմիւններում նուագում էր հայ ուսանողներից կազմված փոքրիկ խմբակը՝ սեփական գործընկերների վրա: Այն տիպի ու մեղաձուգում եղանակները, որ ամենից պարզախոս արտայայտիչներն են հայ ժողովրդի դարերի վշտերի ու հեծեմանների, մեծ ոգևորութեամբ էին ընդունվում և անաղին բազմութիւն գրաւում նուագողների շուրջը:

Կոնցերտային բաժնից յետոյ սկսվեցին ասիական և յետոյ եւրօպական պարերը, որ մինչև ժամի 3-ը տեւեցին, որից յետոյ հասարակութիւնը ուրախ տրամադրութեամբ տակ քիչ-քիչ սկսեց զրկել:

Մայրաքաղաքի ուսու լրագիրներից մի քանիսը մեծ համակրութեամբ են խօսում հայոց երեկոյթի մասին, հետաքրքիր է, ի միջի այլոց, «Новости»-ի ընկերակցի հետեւել կտորը, որ մի և նոյն ժամանակ մի թեթիւ ակնարկ է «Новое Время»-ի խմբագրութեան և նրա զանազան Անտիկվարիաներին: «Երեկոյթը մամուլի հասարակութեան, գրում է նա,—ինչպիսի ազատութեամբ որսում է նա ամեն մի բանը: Արաքսի արցունքը արցունքներն, ինչպէս ոգևորվում է նա «Զէյթունցուց» մարչի» առաջին ակնկորչներով... նայեցէք այդ բոլորին, և դուք կը հասկնաք, թէ ինչու հայ հասարակութիւնը սիրում է իր երեկոյթները, ինչի նա հաւանում է այստեղ իբրեւ մի միացած ընտանիք, կապված մի ընդհանուր սիրով... բայց, ի հարկէ, հետո «Մեծ Հայաստան» կազմելու զիտուորութիւնից, կուրի ու Արաքսի արկերից մինչև Վօլգայի և Գոնի արկերը»:

Յովհ. Մեղի.

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱՋԵՏԻՅ

Գեղեցեմբերի 6-ին

Մի ամիս սրանից առաջ դատականութիւնը, նկատելով ս. Աստուածածին եկեղեցում մի քանի ձեռքեր, ինժեներ բերել տուեց և համոզվելով, որ եկեղեցուն վտանգ է սպառնում, և մի օր կարող է փուլ գալ, փակել տուեց եկեղեցին և այժմ այնտեղ ոչ մի արարողութիւն չէ կատարվում, իսկ ամբողջ հասարակութիւնը գնում է աղօթելու ս. Կարապետ եկեղեցին՝ որը գտնվում է Բանդի մահլա՝ սոված քաղաքի մէջ: Վերջին եկեղեցին շատ փոքր է՝ 1400 տուն շինարարութեան համար: Թեմական առաջնորդը, այստեղ եղած ժամանակ՝ յորդորեց ժողովրդին՝ նուիրատուութիւն բաց անել և ոչ մի ջանք չը խնայել շուտով նորոգելու ս. Աստուածածին եկեղեցին: Ամիս 3-ին, կիրակի օր, ժողովրդի մի ստուար բազմութիւն, հաւաքվելով ս. Կարապետ եկեղեցին՝ գործակալի նախագահութեամբ, ընտրեց իր միջից 10 հոգաբարձուներ և 3 հայուհեաներ, որոնք պէտք է աշխատեն նուիրենք հաւաքելու հարուստների չըջանում, իսկ աղքատներին, որոնք փողով ոչ մի նպաստ չեն կարող հասցնել, պատուիրել իրանց սալերով քար ու հող կրել:

Ընտրված 10 հոգաբարձուները անձուէր և արի կը գտնվեն,—դա Աստուած գիտէ: Եկեղեցին կառուցանելու համար մի քանի տասնեակ հազարներ են հարկաւոր, որոնցից, կամ ինչ աղբիւրներից պիտի գոյանայ այդ գումարը—իրանք, հոգաբարձուներն էլ չը գիտեն: Եթէ չը գտնվի մի բարեգործ, որ մի խոշոր գումար նուիրէ, մեր եկեղեցին 10—15 տարվայ մէջ զուլս չի գայ: Արդե՞ք մեր հարուստները ինչ գեր պիտի խաղան, կը զգան արդե՞ք իրանց բարոյական պարտականութիւնը, թէ միմիայն կը կերակրեն հասարակութիւնը փքուն խոտովներով...

Վ. Յ.

ՆԱՄԱԿ ԽՐԴԱԲՈՒԹԻՒՆ

Թաւրիզ, Նոյեմբերի 26-ին

«Մշակի» այս տարվայ 130-րդ համարում, Թաւրիզից գրված մի թղթակցութեան մէջ, ի միջի այլոց, թղթակցիցը ասում է. «Ինչպէս միշտ, այս տարի ևս ուսուցիչների մէջ խռովութիւնն անպակաս է, շնորհիւ անհմտ ղեկավարութեան և այլն»:

Դա ճիշդ չէ: Այս տարի Արամեան ուսումնարանի ուսուցչական խումբը, առաւել քան երբեք, համեմատելիութեամբ է տառապում իր ծանր, բայց քաղցր լուծը: Եթէ անպայտ պարոն մասնացոյց է անում խմբի միջից, օրինակ՝ մի ինչ որ ուսուցչուհու, կամ մի ուսուցչի վրա, որոնք իրանց կողմից կատարում են այս ուս. ար. ուսումնարանական գործունէութիւն, և անկասկած ստանում են մեղանից խիստ՝ բայց արդար նկատողութիւն,—դա չէ նշանակում բնաւ, որ մեր ուսուցչական խմբի մէջ գոյութիւն ունի խռովութիւն, և ոչ էլ այս հանգամանքը անհմտ ղեկավարութեան նշան է:

Մեր կարծիքով, որ և է հասարակական հաս-

տատութիւնների և նրանց ղեկավարողների, կամ այլ պաշտօնեաների դէմ անապացոյց անհարկութիւնները անձնական տեղ թշնամութիւնից դէ-նը չեն անցնում: Ուրիշ բան է, եթէ պարոն թղթակցիցը փաստերով դուրս գայ մամուլի մէջ, այն ժամանակ մենք կը պատասխանենք նրան չօշափելի փաստերով:

Տեսուի Թաւրիզի Արամեան և Ս. Աննայի ուսումնարանների՝ Գ. Զինկերեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՌԵՐ

Երէկ, դեկտեմբերի 20-ին, երեկոյեան 10 ժամին, Ռուսաց գործակալութեան միջոցով ստացանք հետեւեալ հեռագիրը Բերլինից. «Էքզորու-մից հաղորդում են «Էնօյնի Լրագիրն», որ այնտեղի հայոց առաջնորդը (Ղևնդ եպիսկոպոս Շիշմանեան), որին թիւրքաց կառավարութիւնը հայոց շարժման պարագլուխ է համարում, բռն-վեց և ուղարկեց Կ. Պոլիս: Ասում են, որ եպիսկոպոսը ընկալութեան համար կը փոխադրվի Երուսաղէմ»:

Մեզ հաղորդում են, որ մի քանի ժամանակ առաջ Կովկասի հայոց Բարեգործական ընկերութիւնը դիմել է Թիֆլիսի առևտրական բանկին, խնդրելով որ նա ընկերութեան գումարները պահի 6¹/₂ օրով, փոխանակ 5¹/₂ օրի Բանկի վարչութիւնը մերժել է այդ առաջարկութիւնը, պատճառաբանելով նրանով, որ եթէ Բարեգործական ընկերութեան գումարները պահի 6¹/₂ օրով, նա ստիպված կը լինի պահել այդ տոկոսներով և միւս հաստատութիւնների գումարները: Ստանալով այդ մերժումը, խորհուրդը, հիմնվելով այն իրողութեան վրա, որ Ռուսաստանում շատ բանկային հաստատութիւններ և նոյն իսկ Թիֆլիսում՝ վրաց աղետականութեան կառուածական բանկը ամեն տարի մի որոշ տոկոս իրանց դի-վիդենդներից յատկացնում են բարեգործական նպատակներին, դիմում է առևտրական բանկին խնդրելով, որ նա տարեկան մի որոշ գումար յատկացնի Բարեգործական ընկերութեան օգտին, ի նկատի ունենալով, որ ընկերութիւնը, ուրիշ կարօտեալների թւում, շատ անգամ օգնում է և վաճառականութեան աղքատացած մասին: Սակայն առևտրական բանկը մերժում է այդ առաջարկութիւնը՝ վերոյիշեալ պատճառաբանութեամբ:

Մեր թղթակցիցը Բոստօնից մեզ հաղորդում է, դեկտեմբերի 7-ից, որ Ամերիկայում ապրող պանդուխտ հայերը մեծ թւով ընդունում են Միացեալ-Նահանգների հպատակութիւն:

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան վերջին նիստը, որ տեղի ունեցաւ երեքշաբթի, ամիս 19-ին, նուիրված էր այն հետադոտութիւններին, որոնք կատարված են Կարս և Երեւան տանող երկաթուղու գծի շրջանում: Ընկերութիւնը ցանկութեան յայտնեց տեսնել այդ հետադոտութիւնները տալագրված: Նիստին ներկայ էր արքեանական երկաթուղիների նախագահ Գորչակովը, որը համակրութեամբ վերաբերվեց այդ առաջարկին և խոստացաւ իր կողմից նը-պաստել, խորհրդակցելով Կարսի երկաթուղու անօրէն վարչերի հետ:

Այսօր, դեկտեմբերի 21-ին, վրաց աղետական-ների թատրոնում, հայոց դերասանական խումբը տալու է մի ներկայացում՝ յօգուտ Հայուհեաց ընկերութեան: Պէտք է խաղան Սունդուկեանցի «Պեպո» կօմիդիան: Ներկայացման մասնակցելու են նախկին դերասաններ Զիլկեան ամուսինները և Մանդինեան:

Նախկինների գաւառի Թաղա-գիւղացի Յարու-թիւն վարդապետ նուիրեց «Մշակի» 1896 թ-ի մի օրինակ այդ գիւղի դպրոցին:

Մեր երկրի ոչխարապահներն այն խորհրդակցութիւնը, որի մասին արդէն հաղորդեցինք, չորս նիստ ունենալուց յետոյ, կայացրեց հետեւեալ որոշումները.—բանալ կենտրոնական մի կամ մի քանի բրդի պահարաններ, և կազմել ոչխարատէրերից մի ընկերութիւն, որ առաջ մղի այն գործնական խնդիրները, որոնք հետա-

քրքրում են Կովկասի ոչխարապահներին: Խորհրդակցութիւնը բարւոք համարեց այդ որոշումները ներկայացնել Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան և խնդրել նրա կարծիքը ու աջակցութիւնը՝ յարուցված խնդրում:

ԻԳԴԻԴԻՅ մեզ գրում են. «Արաքսից իդդիբ տանող խճուղին համարեա պատրաստ է, մնում է ծածկել խճով և կամուրջները չինել: Շտապով չինվում է նայնպէս և Երասխի կամուրջը, ժամանակաւոր փայտեայ կամուրջն արդէն չինված է, չուտով սկսվելու են իսկական կամուրջի աշխատանքները: Մի երկրորդ կամուրջ է չինվում Երասխի վրայով, դէպի Կողբ գնացող ճանապարհի վրա, Երուսաղեակերտի աւերակների մօտ, Ղարաղայ կոչված տեղում, որը ուղղական նշանակութիւն կարող է ունենալ»:

ԳԱՆՁԱԿԻՅ մեզ գրում են. «Գեղեցեմբերի 13-ին, առաւօտեան ժամը 4—5-ին, Նորայէն թաղում տեղի ունեցաւ հետեւեալ ոճորագործութիւնը. անյայտ շարագործներ դաշոյնի երեք հարւածով սպանել են 70 տարեկան Մարիամ Խօջայեանցին, իր տան բակում: Ինչպէս երևում է հանգամանքներից, շարագործները գողութեան նպատակով են եկել այդ բակը: Գործը զննչին է յանձնված: Հանգուցեալի որդին—Մեղայի Խօջայեանց, իր մօր յիշատակը պատուելով՝ նուիրել է Նորայէնի աղքատ ծխական երկսեռ դպրոցին 100 բուլղի, Նորայէնի եկեղեցուն 50 բ. և Նորայէնի աղքատ ընտանիքներին բաժանելու համար 25 բ. »:

ՆՈՒԹԻՅ մեզ գրում են. «Գեղեցեմբերի 2-ին մեր դպրոցները հանդիսով տնեցին Թաղեայ և Բարթոլոմէոս առաքեալների տօնը: Գլուխացական պատկերասրահն հանդէսը աջող էր կազմված: Ռուսաց լեզուի ուսուցիչ Ե. Սելեր-Ջանեան բացատրեց երեկաներին, պարը և հասկանալի լեզուով, այդ տօնի նշանակութիւնը: Այս աշակերտների երգեցիկ խումբը քառաձայն երգեց մի քանի երգեր, երեք աշակերտ էլ կարդացին ոտանաւորներ, և ապա փոքրիկների հասարակութիւնը ուրախ սրտով և զուարթ դէմքով ցրվեց իրանց տնեքը»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Հեռագիր Ռուսաց գործակալութեան)

Կ. Պօլիս, 18 դեկտեմբերի: Գեղեցեմբերի 15-ին կալանաւորեցին շատ թիւքեր, որոնց թւում և երեք պաշտօնեաներին և սովորական աղետաւորներին: Այդ կալանաւորութիւնները կապում են այն ցոյցի հետ, որ մտադրութիւն ունեցն անել անցեալ ուրբաթ, սեղանելով ժամանակ, ներկայ ընթիւմ դէմ Զեռք առած միջոցների շնորհով, ցոյցը տեղի չունեցաւ:

Կ. Պօլիս, 19 դեկտեմբերի: Նախկին շտապ-մէդտեր իդդեա-փայտ, ղինուրական դատարանի վճռով, պաշտօնադուրկ է եղած և աքսորված է Մօսու: Պետերբուրգի նախկին ղինուրական գործակալ Ադիս-բէյ ղինուրական դատարանի է նմանակված:

Կ. Պօլիսից մեզ գրում են դեկտեմբերի 11-ից, որ իզմիրեան պատրիարքը մինչև այժմ հաւաքել և ուղարկել է Հայաստան, սովաւելների համար, մօտ 25,000 բուլղի:

Ամերիկական դեսպան Թըրքլի Զմիւռնիս գնալը շատերը կապում են Զէյթունի հարցի հետ: Ենթադրում են, որ դեսպանը գնաց խորհրդակցելու ամերիկական պահակաւոր հրամանատարի հետ:

Կ. Պօլիսից հաղորդում են դեկտեմբերի 10-ից, որ վերջին օրերը մի քանի հայ բանասերականներ արձակվեցին: Թիւրքերի մէջ նորանոր ձերբակալութիւններ են լինում:

«Frankfurter Zeitung» լրագրի խօսքով, վեց պետութիւնների դեսպանները յայտնեցին Բ. Դրանը, որ իրանց կառավարութիւնները կը բո-

դրեան այն խիստ միջոցներն զէմ, որ Բ. Գուգը զիտաւորութիւն ունի ձեռնարկել Զէյթունի հայ ապստամբներն վերադարձնելու:

Կ. Պօլսից «Times» լրագրին հետագրում են, որ գերմանական զեպանը, իր կառավարութիւնից ստացած հրահանգներէ հիման վրա, ամենախիստ առաջադրութիւններ արաւ Բ. Գրանը Զէյթունի հայերէ կոտորածի առաջն առնելու համար: Այդ առաջադրութիւնները պաշտպանեց և բրիտանական զեպան սըր Ֆիլիպ Կէրրի:

Իզմիրեան պատերազմը նոր մեծանշանում ուղարկեց Բ. Գրանը, որով արդարացիում է իր հաստատելոցներին նրանց վրա բարդած մեղադրանքներին և յայտնում է, թէ որովհետև ինքն հայերէն սպանութիւններէ հեղինակ չէ համարում, այդ պատճառով չէ կարող այնպիսի կոչում առնել նրանց, որպիսին պահանջում է Բ. Գուգը: Վերջապէս ինքն մէջ պատերազմը պահանջում է վարձատրել ըստ ինքնավարութիւնի:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Անգլիայի և Ամերիկայի մէջ սկսված տարաձայնութեան պատճառով, ամերիկական բոլորսն ահազին ձեռնարկ կընց: Ասում են, որ հինգ անանկութիւններ են տեղի ունեցել և Նիւ-Եորքի բանկիրները արդէն հեռագրեցին սենատորներին, որպէս զի նրանք իրանց վերջնական վճիռը վերջնական հարցի առիթով չեն առնա՞ցին:

—Վալիքաճօնից «Galignani Messenger» լրագրին մի անհատական լուր են հաղորդում, որ իբր ին Թուստանի և Միացեալ-Նահանգների մէջ գաղտնի դաշնագրութիւն կայ վերջնական հարցի առիթով: Դրանով են բացատրում նախագահ Կլիվլենդի համարձակութիւնը:

—«Memorial Diplomatique» լրագրի խօսքով, Մակեդոնիայում ձերբակալեցին աւստրիական մի քանի գործակալներին, որոնք յուզում և գրգռում էին ալբանական ազգաբնակիչները: Դիպլոմատիական ընդհարումներից վախենալով, Բ. Գուգը այդ գործակալներին հեռացրեց Մակեդոնիայի սահմաններից:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՐԻՉ, 18 դեկտեմբերի «France» լրագրի խմբագիր Կլոմիլիէ փախաւ Բրիտանիա, թէպէտ և լրագրի չէ նայելով իր զէմ սկսած սրբօրհաններին, շարունակում է տպել պանամիստների ցուցակը:

ՍՕՖԻԱ, 18 դեկտեմբերի Մակեդոնական համազումար ժողովը փակվեց, գործերը վարելու համար ընտրելով մի մասնաժողով 12 անձերից բաղկացած, որոնք բացառապէս պատկանում են դիմադրական կուսակցութեանը:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 18 դեկտեմբերի: Դեկտեմբերի 18-ին այստեղ հասաւ Արիֆ-փաշան, որը ընծաներ և սուլթանի ինքնագիր նամակը բերեց թագաւոր Կայսրին:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 19 դեկտեմբերի: Հրատարակված է բարձրագոյն ուղարկ կառավարչական սենատին, որով բանտային վարչութիւնը առնվում է ներքին գործերի միջխորութիւնից և միացվում է արդարադատութեան միջխորութիւնները, ենթարկելով ինքն վարչութիւնը և ինքն ինքն գլխավորին արդարադատութեան միջխորութիւնը:

ԼՕՆԻՕՆ, 19 դեկտեմբերի: Տրամադալի հանրապետութեան մէջ գաղթած անգլիացիները այնտեղ յեղափոխութիւն են պատրաստում՝ հանրապետութիւնը բրիտանական կօլօնիա դարձնելու նպատակով: Հանրապետութեան կառավարութիւնը զօրքեր է հրաւիրում անգլիացիների այդ մտադրութեանը դիմադրելու համար: Անգլիացիները դիմեցին կայսրին կառավարութեանը՝ խնդրելով պաշտպանել իրանց: Տրամադալեան հանրապետութեան նախագահը ուղարկեց զօրութիւն ինքն ինքն Բերլին՝ խնդրելու վիճելու կայսրի հովանաւորութիւնը:

ԵՕՀԱՆԵՆՍԲՐՈՒԳ, 19 դեկտեմբերի: Լուրեր են պատում թէ գաղթած կերպով գինարկված համախմբումներ լինում հանքերում և թէ պատերազմական պատրաստութիւններ է տեսնում Տրամադալի հանրապետութիւնը: Գործերը կանգ են առնում: Ամերիկացիները և գերմանացիները կառավարութեան կողմն են ընդունում, մնացած օտարազգիները—միայն մասամբ: Նախագահ Կրիւզեր յայտնեց, որ կառավարութիւնը զգում է զրուկեան ծանրութիւնը: Սպասում են մի քանի հանքերի փակելուն: Պատերազմական լուրերը չեն

զարգանում: Կառավարութիւնը առաջարկեց քաղաքացիներին պատրաստվել զինուորական ծառայութեան համար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ
Դեկտեմբերի 19-ին

ԼՕՆԻՕՆԻ վրա 10 ֆունտ արծէ . . .	93 ր. 90 փ.
Բերլինի վրա 100 մարկ . . .	45 > 75 >
Պարիզի վրա 100 ֆրանկ . . .	37 > 15 >
Ոսկի . . .	արծէ . . . 7 > 50 >
Մաքսային կուպօններ . . .	150 > — >
Արծաթ . . .	— > — >
Բորսային դիվիդենտ . . .	61 1/2 0/0 >
4 0/0 պետական թէնտա . . .	97 7/8 > — >
5 0/0 ռեկայ թէնտա 1884 թ. . .	— > — >
Ներքին 5 0/0 առաջին փոխառութիւն . . .	284 > — >
— Երկրորդ . . .	239 > 50 >
5 0/0 գրաւ. թղթ. ագն. կալ. բանկի . . .	206 > 75 >
5 0/0 պետական երկաթուղ. թէնտա . . .	100 > — >
4 0/0 ներքին փոխառութեան . . .	97 1/2 > — >
4 1/2 0/0 գրաւ. թղթ. ագն. կալ. բանկի . . .	100 > — >
Ագն. կալ. Պետ. բանկի խաղարկութիւն . . .	100 > — >
4 1/2 0/0 վկայակ. գրաւ. հող. բանկի . . .	100 > — >
Փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ. . .	151 > — >
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաներ . . .	100 > 50 >
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ . . .	100 > 75 >
Օղեսայի . . .	99 > 50 >
Թիֆլիսի . . .	98 > — >
Գրաւ. թղթ. Թիֆլ. կալ. բանկի 6 0/0 . . .	101 > — >
— 5 0/0 . . .	98 > — >
— Գաւթային 6 0/0 . . .	101 > — >
— 5 0/0 . . .	98 > — >

ԽՄԲԱԴՈՒԹԻՒՆՆԵՐ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ԲԱՎՈՒ. Общество Взаимопомощи. Նոյեմբերի 13-ին ուղարկված 10 ռուբլին, և դեկտեմբերի 15-ին ուղարկված 70 ռուբլին ստացանք, բաժանորդներին ցուցակի հետ միասին:

ԵՐԵՎԱՆ. Գ. Հ. և Պ. Ա. Բաժանորդ գրվելու վերաբերեալ ձեր առաջարկութիւնը կը կատարվի:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱՍԻՆՔԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԵԱՍ ԱՐՄԵՆՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎՐԱՅ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Հայ դերասանական ընկերութիւնը, հինգշաբթի, դեկտեմբերի 21-ին, բարեհաճ մասնակցութեամբ Զմիչ և ան ամուսնիներին և պ. Ման Զինեանի Յօգուտ Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան

ընդերկայացնէ

Պ Ե Պ Օ

Կօմէդիա 3 արարուած., հեղ. Գ. Ստեղծականցի
Տօմասկներ՝ Թատրոնի կատարում
Սկիզբը 8 ժամին է:

1—1

Լոյս է տեսել Մօսկվայում՝ ՍՈՒԱԿ ՀԱՅՏԱՍԱՆԻ՝ անուշով ազգային լիակատար երգարանի առաջին հատորը, չօր ուրիշ տպագրութեամբ, և շուտով կուղարկվի բաժանորդներին:

(№ 147) 1—3 Գրքեր քահանայ Գրիգորեանց

Ի գիտութիւն հայ թարգմանիչների յայտնում ենք, որ արդէն հեղինակից հարկաւոր արտօնութիւնը ստացված է և թարգմանվում է՝

«ИСТОРИЯ ЦИВИЛИЗАЦИИ ВЪ АНГЛИИ»
БОКЛЯ

Въ популярномъ изложении О. К. Нотовича.
(№ 147) 1—2

Շուտով մամուլի տակ կընկնի
«ՀԱՆՐԱՄԱՏՁԵԼԻ ԲԺՇԿԱՐԱՆ»

Երրորդ գիրքը

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ: 1) Վերնական ախտեր: Սիֆիլիս, կակուղ չանկը, սուսունակ. 2) Երբ կարող են ամուսնանալ սիֆիլիսոտ հիւանդները. 3) Միջպարկի հիւանդութիւնները. 4) Միջպարկի քաղախոր. 5) Արանց և կանանց սեռական անկարողութիւնը:

Խնդրում են այն բաժանորդներին, որոնք փոխել են ընտելութեան տեղերը, հաղորդեն ինձ իրանց նոր հասցէները:

Իմ հասցէն՝ ЕЛИСАВЕТОПОЛЬ, помощнику Елисаветопольскаго губернскаго врача доктору Медицины Теръ-Григорьянцъ.

(№ 147) 1—3

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Խորհուրդը յայտնում է Ընկերութեան անդամներին, որ ամսիս 23-ին, չաբաթ օր, երեկոյեան ժամը 7-ին, Գուգայի դահլիճում նշանակված է Ընկերութեան անդամների ընդհանուր ժողով:

Պարագմունքի առարկաները լինելու են.—1) Ընկերութեան 1894 թ.ի ընդհանուր, այն է —կենտրոնի և ճիւղերի հաշուի ըննութիւնը և հաստատութիւնը. 2) Վերատուգող յանձնաժողովների զեկուցադրերը Խորհրդի և ճիւղերի հաշիւների մասին և Խորհրդի ու տեղական վարչութիւնների տուած բացատրութիւնները. 3) Ախալցխայի վարչութեան յաւելումական նախահաշիւը 1895 թ. համար:

Ընկերութեան 1894 թ. տեղեկագիրը տպագրված լինելով, անդամները կարող են ստանալ ձրիաբար մի-մի օրինակ Խորհրդի գրասենեակից (Սերգիէվսկայա փողոց, տուն Ալիսանեանի № 16):

2—3

(№ 146)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԳԱՀԻՐԵԻ ՀԱՅՈՑ ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ընկերութիւնս՝ որ հիմնված է քաղաքիս մէջ ընթերցանութիւն ծաւարելու և ազգատիկ հայ ուսանողաց դաստիարակութեան նպատակաւ՝ պատիւ ունի ծանուցանել թէ իր ընթերցարահի բացման ձեռնարկած է. հետեւաբար կը փութայ յայտարարել բարեհաճ ազգայնոց, թարգմանչաց և հեղինակաց, թէ ամենայն սիրով և մեծաւ շնորհակալութեամբ կընդունի իրեն եղած ամեն գրական նուէրները:

Ընկերութեան հասցէն է՝ Societe Armenienne des Amis de la Lecture, CAIRE, Egypte. Ի դիմաց գործ. ժողովոյ ատենապետ՝ Գ. Շանթունի, Ատենադպիր՝ Ա. Բ. Աստուածատուրեան (№ 145)

3—4

ԿՐԱԿԻ ԴԵՄ ՓՈԽԱԳԱՐՁ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ապահովագրում է ամեն տեսակ շինութիւններ Թիֆլիս քաղաքի մէջ

ՏԵԼԵՖՈՆ № 288

Վարչութիւնը գտնվում է քաղաքային տանը, Երևանեան հրապարակի վրա, և բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 2 1/2-ը կես օրից յետոյ:

Մուտքը վճիռամիսովսկայա փողոցից, քաղաքային դուռայի պողէզովից: (№ 90) (Տ.) 15—20

ԲԱՅՎԱԾ Է ԱՌԱՋԻԿԱՑ 1896 ԹԻՒ ԲԱՅԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՂԲԻՐ ամսագրի Ե Ի ՏԱՐԱՂ շաբաթաթերթի

Կը հրատարակվին նոյն ուղղութեամբ, ծրագրով, զիբրով և աշխատակիցներին մասնակցութեամբ

ԱՂԲԻՐ և ՏԱՐԱՂ հանդէսների №№-ը հրապարակի վրա են, ընթերցողն անչուտ փաստերն աւելի կը գերադասէ պիտի խօսքներն: Հէնց այդ պատճառով ոչ մի խոստումը չենք անում առաջիկայ տարվայ համար: Կաշխատենք, որքան հնարաւոր է, որքան կարող ենք, մեր ընթերցողներին գոհ անելու:

ԱՂԲԻՐ—ՏԱՐԱՂ բովանդակութիւնն աւելի ևս ճոխ ու բազմակողմանի լինելու համար կարեւոր հոգաբարձութիւններ արված են:

ԱՂԲԻՐ և ՏԱՐԱՂի առաջիկայ 1896 թ.ի համար կլինեն, զանազան տառեր ստացված են ԼՕՆԻՕՆԻց, Պարիզից, Խաղախից մեծ քանակութեամբ:

ԱՂԲԻՐ

(XIV-րդ տարի)

Միամսեայ պատկերազարդ հանդէս

մանուկներին, ծնողներին և դաստիարակներին համար: Տարեկան 12 համար, իւրաքանչիւր համարը 2—3 թերթի, ամսուկայ սկզբի և վերջի համարները լոյս են տեսնում միասեղ:

«ԱՂԲԻՐ» տարեկան բաժանորդագիրը 3 ռ., արտասահման 4 ռ. կամ 12 ֆր. նը 3 ռ., արտասահման 4 ռ. կամ 12 ֆր.

«ԱՂԲԻՐ»—ՏԱՐԱՂի 1896 թ.ի պրէմիաները

«Աղբեր» և «Տարաղ» մի և նոյն հասցէով բաժանորդ գրվողը կը ստանայ «Աղբեր» առաջին համարի հետ հետեւեալ պրէմիաները

1) Գեղարուեստական ալբոմ—այմանալս: Պատկերներ և նկարներ, մի ստուար չքեղ հրատարակութիւն 1 վեց տեղութիւնների վեհագեղանք. II Հայաստանի բարձրաստիճան հոգեւորականներ. III Վեց պետութիւնների նախարարներ, զեպաններ. IV Հրապարակախօսներ. V Փաղաքական գործիչներ. VI Հայաստանցիներ. VII Հայաստանի տեսարաններ. VIII Վեց պետութիւնների մայրաքաղաքներ. IX Զէյթուն, Վիլնիւս. X Հայաստանի քաղաքներ: Աղբեր—Տարաղի գեղարուեստական ալբոմ-այմանալս ստանալու համար պէտք է ուղարկել 60 փ. (կարելի է և պօստի մարկաներով): (Այդ հրատարակութիւնը առանձին արժէ 3 ռ.):

2) Անվաներ արքայան պարտիքը իզմիրեանի մեծագիր (28×14 ս.) չքեղ պատկեր ճենապակու վրա, գեղարուեստական սքանչելի մի գործ ԼՕՆԻՕՆԻց պատրաստված, փառաւոր և անհրաժեշտ զարդ ամեն հայի տան: Պատկերը պէտք չունի առանձին չքանակի, բոլորովին պատրաստ է, ունի յենարան և ուղարկվում է բաժանորդներին (յունվարի 1-ից հերթով) առանձին ինամով պատրաստված կրկնակի արկղների մէջ: Այդ պատկերն ստանալու ճանապարհի, մաքսի և արկղների ծախս պէտք է վճարել միայն 2 ռ.: (Ճենապակու վրա այս պատկերն առանձին արժէ ճանապարհածախսով 6 ռ.):

Հասցէն՝ Тифлисъ, редакция иллюстр. жур. «Арбуръ—Таразъ». Tiflis, (Caucase) Redaction du journal „Agbour—Taraz“.

Խմբագիր—Հրատարակիչ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

1—5

Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն

Գ. ԵՒ Վ. ՄԱՐԳԱՐԵԱՆՆԵՐԻ

Տեղակի Բնագիր, Աղբանդարովսկայա լինիա № 106—107—108

ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

ՁԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ՄԵՏԱՓՈՆ ԱՊՐԱՆԻՔՆԵՐԻ

Սաղա և ծաղկաւոր մանուկ, պլուշ լինա-գոտիկ, ձախատանոց, զլին աղլուխ, բարձի երես, պլուշի զորդ, ֆուլիար, բուրս, լուսարին և այլն:

ՊԱՀԵՍ ԹԻՖԼԻՍՈՒՄ. Գանձովսկայա, № 31, Գ. Մարգարեանի մօտ:

(№ 79) 5—10